41-ՐԴ ՆԻՍՏ

3 դեկտեմբերի 1918թ.

Նստիտը բացվում է երեկոյան ժ. 7-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակումն են՝ Մինիստր-նախագահ, արտաքին գործոց, ներքին գործոց, իրավարարության, պարենավորման և զորական մինիստրները:

Կարդացվում են խմբագրական հանձնաժողովի կողմից նախորդ նիստերում ընդունած օրինագծերը և հաստատվում:

Քննության է դրվում Թիֆլիսի պոլիտեխնիկումին և համալսարանին նյութական օժանդակություն տալու խնդիրը, իբրև միջազգային հիմնարկությունների: Վեճ է առաջ գալիս այն հողի վրա, թե առանց կառավարության գիտության ու սրա կողմից խորհրդարան օրինագիծ մտցնելու պետք է քննվի՞ հարցը, թե՞ ոչ:

Հարցը քվեարկության է դրվում և անցնում է այն առաջարկը, որ խնդիրը հանձնվի կառավարությանը մի օրինագիծ մշակելու և խորհրդարան բերելու նպատակով:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցում է կառավարության առաջարկը Եվրոպա գնացող պատգամավորության[ը] 700.000 ռուբլի բաց թողնելու օրինագծի մասին:

Խորհրդարանն ընդունում է առաջարկը ձայների մեծամասնությամբ:

Եվրոպա են գնալու՝ երեք պատվիրակ, երկու խորհրդական, վեց աշխատակից զանազան հանձնարարություններ կատարելու համար, մեկ գործավար և երկու քարտուղար, ընդամենը՝ 14 հոգի:

Պատգամավորության կազմը, լիազորություններն ու հրահանգները վերապահվում են կառավարության:

Մինիստր-նախագահ - Պատասխանելով մուսուլմանական ֆրակցիայի այն հարցման, թե ի՞նչ վերաբերմունք ցույց կտա կառավարությունը Երևան վերադառնալ ցանկացող մուսուլմանների նկատմամբ, ասում է, որ բացասական վերաբերմունք կառավարության կողմից, իհարկե, ցույց չի տրվի, սակայն նկատի ունենալով պարենի և բնակարանների ճգնաժամը, ցանկալի է, որ վերադարձը լինի մաս-մաս և եկողները բերեն հետները կենսամթերքներ:

Ա. Մալխասյան - Շարունակում է դատաստանական որոշ կանոնների փոփոխման մասին եղած օրինագծի ընթերցումը:

Նիստը փակվեց գիշ[երվա] ժ. 12-ին:

«Զանգ», 29 դեկտեմբերի 1918թ.